Ապրիլի 27, 2015

Համապատասխանության ապահովման պաշտպան-
խորհրդականի (ՀԱՊ) գրասենյակ

ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի <<Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդ>> ընկերությունում (Ծրագիր #27657) ՄՖԿ-ի կողմից կատարված ներդրումները

Բողոք N 01

Ամփոփագիր

Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդը (այսուհետ՝ ընկերություն) Միացյալ Թագավորությունում հիմնված և հանքերի հետազոտմամբ զբաղվող ցուցակարգրված կրտսեր ընկերություն է, որը Հայաստանում իրականացնում է Ամուլսարի ոսկու հանքի ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր): ՄՖԿ-ն առաջին անգամ ընկերությունում նեդրում է կատարել 2007 թ. ֆինանսավորելու համար Կոսովոյում, Հայաստանում և Թուրքիայում Լիդիանին պատկանող հանքային ռեսուրսներին առնչվող հետազոտման աշխատանքները և իրագործելիության ուսումնասիրությունները: Այս նախնական ներդրմանն հաջորդել է 6 լրացուցիչ ներդրում և բաժնետոմսերի 5 երաշխավորագրի տրամադրում: Ներկայումս ՄՖԿ-ին է պատկանում Լիդիանի բաժնետոմսերի 7.9 տոկոսը, ինչը կազմում է 17.3 միլիոն կանադական դոլար ներդրումների տեսքով:

Զեկույցը գրելու պահին ծրագիրը գտնվում էր իրագործելիության առաջընթաց փուլում: Իրագործելիության մանրակրկիտ ուսումնասիրությունից և Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումից (ՇՄԱԳ) հետո 2014 թ. նոյեմբերին ընկերությանը տրվել է հանքարդյունահանման թույլտվություն: Միջազգային չափանիշներին համապատասխանող Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատումը (ԲՍԱԳ) ակնկալվում է հրապարակել 2015 թ. ապրիլին: Նաև ակնկալվում է, որ 2015 թ. վերջերին ծրագիրը կանցնի զարգացման և շինարարության փուլին՝ կենտրոնանալով ոսկու արտադրության վրա 2017 թ.:

2014 թ.-ի ապրիլին ՀԱՊ-ը ստացավ բողոք ծրագրի իրականացման շրջակայքում գտնվող Գնդեվազ գյուղի և Ջերմուկ քաղաքի բնակիչների կողմից, ում աջակցում էին 9 հասարակական կազմակերպություն (ՀԿ): Բողոքարկուների մտահոգությունները վերաբերում էին ծրագրի առնչությամբ շահագրգիռ կողմերի հետ իրականացվող

խորհրդակցության պատշաճությանը և շրջակա միջավայրի ու համայնքների վրա ծրագրի հնարավոր բացասական ազդեցությանը: Բողոքում վերհանված խնդիրները ներառում են քննադատություն ընկերության կողմից իրականացված ազգային ՇՄԱԳ-ի գործընթացի, ինչպես նաև ՄՖԿ-ի Գործունեության չափանիշների և ազգային կանոնակարգերի ենթադրյալ խախտումների վերաբերյալ: Այնուհետև ՀԱՊ-ի գնահատման փուլում ծրագրի շահագրգիռ կողմերը արտահայտեցին լրացուցիչ մտահոգություններ մշակութային ժառանգության և ՀՀ-ում Համաշխարհային բանկի ծրագրի վրա հնարավոր բացասական ազդեցության վերաբերյալ:

ՀԱՊ-ի սույն համապատասխանության փորձաքննության նպատակն է որոշել բնապահպանական և սոցիալական ոլորտներում ՄՖԿ-ի գործունեության աուդիտի նպատակահարմարությունն ստացված բողոքի առնչությամբ: Աուդիտի նպատակահարմարությունը որոշելիս ՀԱՊ-ը հաշվի է առնում մի շարք գործոններ, այդ թվում՝ բողոքում վերհանված բնապահպանական և սոցիալական մտահոգությունների կարևորությունը, այդ խնդիրների առնչությամբ բնապահպանական և սոցիալական ոլորտներում ՄՖԿ-ի գործունեության նախնական վերանայումը և աուդիտի նպատակահարմարության ավելի ընդհանուր գնահատումը:

Այս դեպքում ՀԱՊ-ը որոշում է կայացնում, որ բողոքը ներառում է բավարար մտահոգություններ ծրագրի բնապահպանական և սոցիալական հետևանքների հնարավոր կամ փաստացի շրջանակի վերաբերյալ: Նման որոշման հանգելիս ՀԱՊ-ը հաշվի է առել այն փաստը, որ ՄՖԿ-ն մինչ օրս միայն ֆինանսավորել է հանքի շինարարության նախապատրաստական աշխատանքները, իսկ հանքի շինարարությունը ֆինանսավորելու վերաբերյալ որևէ որոշում չի կայացվել: Այնուամենայնիվ, ՄՖԿ-ի կողմից ընկերությունում կատարված ներդրումները հստակ նպատակ ունեն հնարավորություն ստեղծել հանքի շինարարության համար, ինչն ակնկալվում է սկսել շուտով: Հաշվի առնելով, որ բնապահպանական և սոցիալական ոլորտներում ՄՖԿ-ին ներկայացվող պահանջները տարածվում են մինչ օրս ֆինանսավորվող նախապատրաստական աշխատանքների վրա՝ ՀԱՊ-ը եզրակացնում է, որ բողոքարկուների կողմից բարձրացվող մտահոգությունները տեղին են ՄՖԿ գործունեության, մասնավորապես՝ այդ ներդրումների առումով: ՀԱՊ-ը նույնպես վերհանել է հարցեր ՄՖԿ-ի կողմից ծրագրի բնապահպանական ու սոցիալական ոլորտներին առաջադրվող պահանջների դիտարկման և վերահսկման վերաբերյալ:

Բոլոր նկատառումների հաշվառման արդյունքում ՀԱՊ-ը որոշում է կայացնում իրականացնել սույն ծրագրի մակարդակով ՄՖԿ-ի բնապահպանական և սոցիալական գործունեության աուդիտ: Նշված աուդիտի Տեխնիկական առաջադրանքը կհրապարակվի համաձայն ՀԱՊ-ի Գործառնական ուղեցույցի:

Համապատասխանության ապահովման պաշտպան-խորհրդականը (ՀԱՊ)

ՀԱՊ-ի առաքելությունն է ծառայել որպես խնդիրների լուծման անաչառ, վստահված, արդյունավետ ու անկախ մեխանիզմ և բարելավել Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) և Բազմակողմ ներդրումների երաշխավորման գործակալության (ԲՆԵԳ) հաշվետվողականությունը բնապահպանական և սոցիալական ոլորտներում:

ՀԱՊ-ն անկախ մարմին է, որն ուղղակիորեն հաշվետու է Համաշխարհային բանկի խմբի նախագահին: ՀԱՊ-ը դիտարկում է բողոքներ՝ ստացված այն համայնքներից, որոնք տուժել են Համաշխարհային բանկի խմբի մասնավոր հատվածին աջակցող երկու ճյուղերի՝ ՄՖԿ-ի և ԲՆԵԳ-ի կողմից իրականացվող ծրագրերի արդյունքում:

Ավելի մանրամասն տեղեկատվություն ստանալու համար այցելե՛ք ՀԱՊ-ի կայք հետևյալ հղմամբ՝ www.cao-ombudsman.org:

Բովանդակություն

Ամփոփագիր 1
Հապավումների ցանկ 5
I. Ընդհանուր տեղեկատվություն չափանիշների համապատասխանության ստուգմանն ուղղված փորձաքննության մասին 6
II. Ներածական տեղեկատվություն 8
Ներդրումներ 8
Բողոքն ու ՀԱՊ-ի կողմից իրականացված գնահատումը 8
III. Վերլուծություն 9
ՄՖԿ-ի քաղաքականություններն ու ընթացակարգերը 9
Ներդրմանը նախորդող բնապահպանական և սոցիալական դիտարկում 10
Պահանջներ 10
Եզրակացություն 12
Ծրագրի վերահսկողություն 12
Պահանջներ 13
Ծրագրի վերահսկողությունը ՄՖԿ-ի կողմից 14
Եզրակացություն 16
IV. Որոշում 17
Հավելված՝ ՄՖԿ ներդրումները Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերությունում 18

Հապավումների ցանկ

Հապավում	**Սահմանում**
ԱԼՄՓ	Արդյունաբերական լավ միջազգային փորձ
ԱՆԱ	Առաջարկված ներդրման ամփոփագիր
ԲԱԱ	Բնապահպանական, առողջության ու ապահովության
ԲՍԱԳ	Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում
ԲՍԳԾ	Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիր
ԲՍԴԱ	Բնապահպանական և սոցիալական դիտարկման ամփոփագիր
ԲՍԴԸ	Բնապահպանական և սոցիալական դիտարկման ընթացակարգեր
ԲԴԿՀ	Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգ
ԳՉ	Գործունեության չափանիշ
ԻՈԻ	Իրագործելիության ուսումնասիրություն
ԾՏՓ	Ծրագրային տվյալների փաստաթուղթ
ՀԱՊ	Համապատասխանության ապահովման պաշտպան-խորհրդականի գրասենյակ (ՄՖԿ և ԲՆԵԳ)
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՁ	Համատեղ ձեռնարկություն
ՄՖԿ	Միջազգային ֆինանսական կորպորացիա
ՇԿՆԾ	Շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագիր
ՇՄԱԳ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
ՏԱ	Տեխնիկական առաջադրանք
ՏՎԱ	Տեղանքի վերահսկման այց
CAD	Կանադական դոլար
TSX	Տորոնտոյի ֆոնդային բորսա

I. Ընդհանուր տեղեկատվություն չափանիշների համապատասխանության ստուգմանն ուղղված փորձաքննության մասին

ՄՖԿ կամ ԲՆԵԳ-ի որևէ ծրագրի վերաբերյալ բողոք ստանալուց հետո ՀԱՊ-ն այն ուղղորդում է գնահատման: Եթե ՀԱՊ-ը եզրակացնում է, որ կողմերը չեն ցանկանում կամ չեն կարող լուծել վեճը ՀԱՊ-ի աջակցությամբ, ապա գործը փոխանցվում է ՀԱՊ-ի՝ Գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկողության ստորաբաժանում գնահատման և հնարավոր աուդիտի անցկացման նպատակով:

Փորձաքննությունը կարող է նաև սկսվել ՀԱՊ-ի փոխնախագահի, ՄՖԿ/ԲՆԵԳ ղեկավարության կամ Համաշխարհային բանկի խմբի նախագահի նախաձեռնությամբ:

ՀԱՊ-ի Գործունեության չափանիշների համապատասխանության վերահսկողության ստորաբաժանման վերահսկողության օբյեկտ են հանդիսանում ՄՖԿ-ն և ԲՆԵԳ-ը, այլ ոչ նրանց հաճախորդը: Սա վերաբերում է ՄՖԿ-ի ողջ գործունեությանը, այդ թվում՝ իրական հատվածին, ֆինանսական շուկաներին և խորհրդատվական ծառայություններին: ՀԱՊ-ը գնահատում է այն միջոցները, որոնք ձեռնարկվել են ՄՖԿ/ԲՆԵԳ-ի կողմից իրենց գործունեության կամ խորհրդատվության իրականացման համար, ինչպես նաև նրանց գործունեության արդյունքների համապատասխանությունը համապատասխան քաղաքականության դրույթների նպատակին: Սակայն հաճախ ծրագրի գործունեությունը և ՄՖԿ/ԲՆԵԳ-ի կողմից համապատասխան պահանջների համապատասխանեցմանն ուղղված միջոցների ձեռնարկումը գնահատելիս ՀԱՊ-ին անհրաժեշտ է վերանայել հաճախորդի գործողություններն ու տեղում ստուգել արդյունքները:

Աուդիտի նպատակահարմարությունը որոշելու համար ՀԱՊ-ը նախ իրականացնում է չափանիշների համապատասխանության ստուգմանն ուղղված փորձաքննություն: Վերոնշյալ գործընթացի նպատակն է ապահովել աուդիտի կիրառումը միայն այն ծրագրերի դեպքում, որոնք էական մտահոգություններ են առաջացնում բնապահպանական և (կամ) սոցիալական հետևանքների տեսանկյունից և (կամ) հանգեցնում ՄՖԿ/ԲՆԵԳ-ի համար համակարգային կարևորություն ունեցող խնդիրների:

Չափանիշների համապատասխանության ստուգմանն ուղղված փորձաքննությունն ուղղորդելու նպատակով ՀԱՊ-ը կիրառում է որոշ հիմնական չափանիշներ, որոնք ՀԱՊ-ին հնարավորություն են տալիս որոշում ընդունել փորձաքննության իրականացման նպատակահարմարության մասին եթե առկա են.

- Ապացույցներ ներկա կամ հետագայում հնարավոր էական անբարենպաստ բնապահպանական և (կամ) սոցիալական հետևանքի (հետևանքների) մասին,
- ՄՖԿ/ԲՆԵԳ-ի կողմից քաղաքականության կամ գնահատման այլ չափանիշների խախտման կամ անպատշաճ կիրառման հատկանիշներ,
- Ապացույցներ առ այն, որ ՄՖԿ/ԲՆԵԳ-ի դրույթները նույնիսկ իրականացվելու դեպքում չեն ապահովել պաշտպանության պատշաճ մակարդակ:

Փորձաքննություն իրականացնելիս ՀԱՊ-ը քննարկումներ է անցկացնում համապատասխան ծրագրի հետ աշխատող ՄՖԿ/ԲՆԵԳ-ի անձնակազմի և այլ շահագրգիռ կողմերի հետ որոշելու

համար, թե ինչ չափանիշներ է կիրառել ՄՖԿ/ԲՆԵԳ-ը ծրագրի գործունեությունն ապահովելու համար, ինչպիսի միջոցներ են ձեռնարկվել ՄՖԿ/ԲՆԵԳ-ի կողմից այդ չափանիշներին համապատասխանելու և բնակչության պաշտպանության համապատասխան մակարդակ ապահովելու, ինչպես նաև ընդհանրապես փորձաքննության իրականացման նպատակահարմարության մասին որոշում կայացնելու նպատակով: Փորձաքննության ավարտից հետո ՀԱՊ-ը կարող է փակել գործը կամ սկսել ՄՖԿ-ի կամ ԲՆԵԳ-ի գործունեության չափանիշների համապատասխանության ստուգմանն ուղղված աուդիտ:

Փորձաքննության ավարտից հետո ՀԱՊ-ը գրավոր ծանուցում է գործընթացի ավարտի մասին ՄՖԿ/ԲՆԵԳ-ին, Համաշխարհային բանկի խմբի նախագահին և Գործադիր տնօրենների խորհրդին: Եթե փորձաքննությունն անցկացվել է ՀԱՊ-ի Վեճերի լուծման ստորաբաժանումից փոխանցված գործի առնչությամբ, բողոքարկուն նույնպես գրավոր ծանուցվում է այդ մասին: Փորձաքննության բոլոր արդյունքների ամփոփումը հանրայնացվում է: Եթե չափանիշների համապատասխանության ստուգմանն ուղղված փորձաքննության արդյունքում ՀԱՊ-ը որոշում է սկսել աուդիտ, ապա վերջինս, համաձայն ՀԱՊ-ի Գործառնական ուղեցույցի, մշակում է փորձաքննության տեխնիկական առաջադրանք:

II. Ներածական տեղեկատվություն

Ներդրումներ

Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդը (այսուհետ՝ ընկերությունը) Բրիտանիայում հիմնված և Տորոնտոյի (Կանադա) ֆոնդային բորսայում (գնադրում՝ TSX:LYD) ցուցակագրված կրտսեր հանքարդյունաբերական կազմակերպություն է: Հայաստանում այն իրականացնում է Ամուլսարի ոսկու հանքի ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր): Վերջինս կառավարվում է Գեոթիմ ՓԲԸ-ի կողմից, որի բաժնետոմսերի 100%-ը պատկանում է Լիդիանին: ՄՖԿ-ն առաջին անգամ ընկերությունում նեդրում է կատարել 2007 թ. ֆինանսավորելու համար Կոսովոյում, Հայաստանում և Թուրքիայում Լիդիանին պատկանող հանքային ռեսուրսներին առնչվող հետազոտման աշխատանքներն ու իրագործելիության ուսումնասիրությունները: Այս նախնական ներդրմանը հաջորդել է 6 լրացուցիչ ներդրում և բաժնետոմսերի 5 երաշխավորագրի տրամադրում:

Ներկայումս ՄՖԿ-ին է պատկանում Լիդիանի բաժնետոմսերի 7.9 տոկոսը, ինչը կազմում է 17.3 միլիոն կանադական դոլար ներդրումների տեսքով: Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ) նույնպես հանդիսանում է ընկերության բաժնետեր, ում պատկանում է բաժնետոմսերի 6.9 տոկոսը:

Զեկույցը գրելու պահին ծրագիրը գտնվում էր իրագործելիության առաջընթաց փուլում: Իրագործելիության մանրակրկիտ ուսումնասիրությունից և Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումից (ՇՄԱԳ) հետո 2014 թ. նոյեմբերին ընկերությանը տրվել է հանքարդյունահանման թույլտվություն: Միջազգային չափանիշներին համապատասխանող Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատումը (ԲՍԱԳ) ակնկալվում է հրապարակել 2015 թ. ապրիլին: Նաև ակնկալվում է, որ 2015 թ. վերջերին ծրագիրը կանցնի զարգացման և շինարարության փուլին՝ կենտրոնանալով ոսկու արտադրության վրա 2017 թ.[1]:

Բողոքն ու ՀԱՊ-ի կողմից իրականացված գնահատումը

2014 թ. բողոքը ներկայացվեց ՀԱՊ-ին Գնդեվազ գյուղի և Ջերմուկ քաղաքի բնակիչների կողմից, ում աջակցում էին 9 հասարակական կազմակերպություն (ՀԿ): Բողոքարկուների մտահոգությունները վերաբերում էին հետագա ծրագրերի հնարավոր հետագա ազդեցությանը շրջակա միջավայրի ու մոտակա համայնքների վրա: Բողոքում վերհանված խնդիրները ներառում են քննադատություն ընկերության կողմից իրականացված ազգային ՇՄԱԳ-ի գործընթացի, ՄՖԿ-ի գործունեության չափանիշների և ազգային կանոնակարգերի ենթադրյալ խախտումների վերաբերյալ: Մասնավորապես, բողոքարկուները բարձրացնում են հետևյալ մտահոգությունները.

- Բողոքների ներկայացման և դիտարկման մեխանիզմի բացակայություն, շահագրգիռ կողմերի հետ սահմանափակ խորհրդատվություն և ահաբեկում,

[1] Գեոթիմի կայք՝ http://www.geoteam.am/en/home.html

- Ջերմուկի հանգստավայրում զբոսաշրջության զարգացմանը սպառնացող հնարավոր վտանգ,
- Սևանա լճի, ինչպես նաև Արփա և Որոտան գետերի ավազանների էկոհամակարգերի վրա բացասական ազդեցություն,
- Քիմիական խառնուրդների օգտագործման հետևանքով ջրի և հողի աղտոտում,
- Ամուլսարում ուրանի պաշարների հետևանքով տարածքի ռադիոակտիվ թունավորում,
- Ցիանային հարթակի կառուցման նպատակով հողատարածքի ապօրինի ձեքբերում,
- Կարմիր գրքում ընդգրկված կենդանիների վրա ազդեցություն:

Ի լրումն սկզբնական բողոքում բարձրացված խնդիրների, ՀԱՊ-ի կողմից գնահատման փուլի ընթացքում ծրագրի շահագրգիռ կողմերը բարձրացրեցին ստորև նշված ևս երկու լրացուցիչ մտահոգություն.

- Հնարավոր ազդեցությունը պատմական և մշակութային ժառանգության վրա,
- Բացասական հետևանքները Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ Հայաստանում իրականացվող «Համայնքների Գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակություն» (ՀԳՌԿՄ) ծրագրի վրա:

Համաձայն ՀԱՊ-ի՝ բարձրացված որոշ խնդիրներ ավելի շատ վերաբերում են հանքի նախագծմանը, շինարարությանը և գործարկմանը, քան հետազոտման ընթացքում իրականացվող որոշակի աշխատանքներին: Սակայն ՀԱՊ-ը համարում է, որ այս խնդիրները կարևոր են հանքի շինարարության նախնական փուլում այնքանով, որքանով ծրագրի շրջանակներում հասցեագրվել կամ կարող են հասցեագրվել ընկերության կողմից պատրաստված ՇՄԱԳ-ում և ԲՍԱԳ-ում՝ մասնավորապես հաշվի առնելով, որ հանքի զարգացումն ու շինարարությունը ակնկալվում է սկսել անմիջապես:

III. Վերլուծություն

Սույն գլխում հակիրճ շարադրվում են ՄՖԿ-ի՝ ծրագրին առնչվող բնապահպանական և սոցիալական քաղաքականություններն ու ընթացակարգերը: Այնուհետև այդ չափանիշների համադրմամբ վերլուծվում է ՄՖԿ-ի գործունեությունը ծրագրի նախապատրաստման և իրականացման ընթացքում՝ բողոքարկուների կողմից բարձրացված խնդիրների համատեքստում:

<u>ՄՖԿ-ի քաղաքականություններն ու ընթացակարգերը</u>

ՄՖԿ-ն ընկերությունում կատարել է ներդրումներ 2006 թ. Սոցիալական և բնապահպանական կայունության քաղաքականության (կայունության քաղաքականություն) և Գործունեության չափանիշների (ԳՉ) (միասին հիշատակվում են որպես Կայունության շրջանակ) շրջանակներում: Համաձայն կայունության քաղաքականության՝ ՄՖԿ-ն պարտավոր է <<ապահովել իր կողմից ֆինանսավորվող ծրագրերի իրականացումը համաձայն Գործունեության չափանիշների պահանջների>> (պարբերություն 5):

ՄՖԿ-ն իրականացնում է Կայունության քաղաքականության մեջ սահմանված պարտավորությունները պարբերաբար թարմացվող Բնապահպանական և սոցիալական դիտարկման ընթացակարգերի (ԲՍԴԸ) միջոցով: Լիդիանի ներդրումը հաստատվել է ԲՍԴԸ 1.0[2] տարբերակով, այնինչ դրա վերահսկվողությունն իրականացվում է համաձայն ԲՍԴԸ հետագա թարմացված տարբերակների:

Ծրագրեր ֆինանսավորելիս ՄՖԿ-ն նախ իրականացնում է գնահատում՝ ուղղված ներդրմանն առնչվող ամբողջական բիզնես ներուժի, ռիսկերի և հնարավորությունների որոշմանը: Ծրագրի հաստատումից և հաճախորդի ընկերությունում ներդրում կատարելուց հետո այդ ներդրումը մշտադիտարկվում է ծրագրի իրականացման ողջ ընթացքում ապահովելու համար վարկային համաձայնագրում ներառված պայմանների ու ՄՖԿ-ի համապատասխան քաղաքականությունների ու չափանիշների իրականացումը: ՀԱՊ-ի սույն համապատասխանության փորձաքննությունը եզրակացնում է, որ ՄՖԿ-ի գործունեությունը ծրագրի իրականացման շրջանակի այս երկու փուլերում առնչություն ունի բողոքարկուների կողմից բարձրացված խնդիրների հետ:

Ներդրմանը նախորդող բնապահպանական և սոցիալական դիտարկում

Նախաներդրումային փուլում ՄՖԿ-ն դիտարկում է առաջարկվող ներդրման բնապահպանական և սոցիալական ռիսկերն ու հետևանքները և հաճախորդի հետ համաձայնեցնում այդ ռիսկերի մեղմացմանն ուղղված միջոցառումները՝ համաձայն Գործունեության չափանիշների: Սույն համապատասխանության փորձաքննության իմաստով կարևոր է որոշել արդյոք ՄՖԿ-ն իրականացրել է ընկերությունում իր կողմից կատարված ներդրումներին առնչվող ռիսկերի պատշաճ նախաներդրումային դիտարկում: Այնուհետև պետք է որոշել, թե արդյոք ներդրումային համաձայնագրում ներառվել են համապատասխան բնապահպանական և սոցիալական պարտավորություններ:

Պահանջներ

Համաձայն Կայունության քաղաքականության՝ ՄՖԿ-ի բնապահպանական և սոցիալական դիտարկումը պետք է <<համապատասխանի ծրագրի բնույթին և ծավալին>>, ինչպես նաև ռիսկերին (պարբերություն 13): Բնապահպանական և սոցիալական դիտարկում իրականացնելիս ՄՖԿ-ն հաշվի է առնում հաճախորդի կողմից գնահատված բնապահպանական և սոցիալական ռիսկերը և <<հաճախորդի հանձնառությունն ու կարողությունը>> այդ ռիսկերի կառավարման գործում (պարբերություն 15): ՄՖԿ-ն նույնպես հաշվի է առնում հաճախորդի <<փորձը>> բնապահպանական և սոցիալական հարցերում[3]: Կայունության քաղաքականության գլխավոր սկզբունքը հետևյալն է. <<ՄՖԿ-ն չի ֆինանսավորում այնպիսի նոր բիզնես գործունեությունը, որը չի կարող համապատասխանել գործունեության չափանիշներին ողջամիտ ժամկետներում>> (պարբերություն 17):

[2] ՄՖԿ Բնապահպանական և սոցիալական վերանայման ընթացակարգեր, տարբերակ 1.0, ապրիլի 30, 2006
[3] ԲՍԴԸ 3, պարբերություն 3.2.3, տարբերակ 1, ապրիլ, 2006.

ՄՖԿ-ի կողմից ծրագրի դիտարկումը նախկան ներդրումները

ՄՖԿ-ի սկզբնական ներդրումը Լիդիանում ուղղված էր ֆինանսավորելու երեք ծրագիր Կոսովոյում, մեկ ծրագիր Թուրքիայում, ինչպես նաև Հայաստանի Ամուլսարի ոսկու հանքի ծրագիրը, որն այդ ժամանակ կազմում էր «Նյումոնթ» լեռնահանքային կորպորացիայի հետ կնքված համատեղ ձեռնարկության պայմանագրի մի մաս: 2007 թ. մայիսին Կոսովոյում և Հայաստանում իրականացվեց ընկերության ծրագրային տեղանքների բնապահպանական և սոցիալական գնահատում: Կոսովոյի տեղանքներ այցելեցին ՄՖԿ-ի բնապահպանական և սոցիալական ոլորտի մասնագետներ, այնինչ Ամուլսարի հանքավայրի ծրագրի տեղանքի գնահատումն իրականացվեց Հայաստանում ՄՖԿ-ի տեղական ներկայացուցչի կողմից: Համաձայն ՄՖԿ-ի կողմից Ամուլսարի ոսկու հանքի ծրագրային գնահատման՝ ծրագիրը վայելում է լայն հանրային աջակցություն և չի հանգեցնի որևէ բացասական բնապահպանական հետևանքի: Միևնույն ժամանակ ՄՖԿ-ն նշեց, որ ընկերությունն ունի բնապահպանական և սոցիալական ոլորտի կառավարման սահմանափակ կարողություն և գործում է այն երկներում, որտեղ բնապահպանական և սոցիալական ոլորտի կարգավորման շրջանակը թույլ է:

Բնապահպանական և սոցիալական դիտարկման ամփոփագիրը (ԲՍԴԱ) հրապարակվեց 2007 թ. մայիսին[4]: Համաձայն այդ փաստաթղթի՝ չնայած գործունեության բոլոր չափանիշները կիրառելի են այս ներդրման դեպքում, միայն 1-4 ԳՉ-ներն են ամբողջությամբ համապատասխանում դրան՝ հաշվի առնելով ծրագրային ռիսկերը: ԲՍԴԱ-ում նույնպես նշվում է, որ ԳՉ 5-ի (Հողատարածքի ձեռքբերում և հարկադիր տարաբնակեցում) և ԳՉ8-ի (Մշակութային ժառանգություն) պատշաճությունը կորոշվի հանքավայրի իրագործելիության ուսումնասիրությունից հետո: Նաև նշվում է, որ <<տեղանք կատարված այցերը և ծրագրային տեղեկատվության դիտարկումը ենթադրում են, որ կենսաբազմազանությունն ու բնական ռեսուրսները չեն ենթարկվի որևէ հետևանքների (ԳՉ 6)>>: Ծրագիրը որակավորվել է որպես Բ դասի ծրագիր, ինչը նշանակում է, որ այն կհանգեցնի սահմանափակ անբարենպաստ բնապահպանական և սոցիալական ռիսկերի և (կամ) հետևանքների:

Գործադիր տնօրենների խորհրդի՝ ընկերությունում ՄՖԿ-ի կողմից կատարված նախնական ներդրմանն առնչվող փաստաթղթերն ավարտուն տեսքի բերվեցին 2007 թ. հունիսին: Համաձայն այդ փաստաթղթերի՝ ՄՖԿ-ն իրականացրել է մանրակրկիտ գնահատում և եզրակացրել, որ ծրագիրը վայելում է հանրային լայն աջակցություն: Նաև նշվում է, որ խոշոր միջազգային հանքարդյունաբերական ընկերության («Նյումոնթ») ներգրավվածությունը որպես ծրագրի խոշորագույն ներդրող պետք է վստահություն ներշնչի Լիդիանի ղեկավարման թիմի որակի և ընկերության ակտիվների հանդեպ, ինչպես նաև հավաստիացնի, որ Լիդիանի ակտիվները կբաշխվեն համաձայն արդյունաբերության ոլորտի լավագույն փորձի[5]:

[4] ՄՖԿ ներդրումները Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերությունում, Բնապահպանական և սոցիալական դիտարկման ամփոփագիր, մայիս 2007, http://goo.gl/3qx7hs

[5] 2010 թ. մարտին Լիդիանը հայտարարեց, որ կգնի Նյումոնթի՝ Ամուլսարի ոսկու հանքի ծրագրում ունեցած կապիտալը http://goo.gl/DzOQMN

ՄՖԿ-ի կողմից մշակված Բնապահպանական և սոցիալական գործողությունների ծրագիրը (ԲՍԳԾ)[6] հաստատվել է ընկերության կողմից: ԲՍԳԾ-ն ընկերության համար սահմանում է հետևյալ պարտավորությունները.

- Ներդրման ստացումը ստորագրելուց հետո մեկ տարվա ընթացքում մշակել հետազոտման գործողությունների ընդհանուր ԲՍԳԾ՝ գործողությունների իրականացման փոխհամաձայնեցված ժամկետների ներառմամբ,
- Ներդրում կատարելու մասին որոշում կայացնելուց հետո երեք ամսվա ընթացքում Ամուլսարի սեփականության առնչությամբ իրականացնել բնապահպանական և սոցիալական վիճակի նախնական ուսումնասիրություններ, որոնք պետք է համապատասխանեն ՀՀ բնապահպանական օրենքներին և կանոնակարգերին, ինչպես նաև ՄՖԿ պահանջներին,
- Յուրաքանչյուր տարի զեկուցել հանրային խորհրդակցությունների և համայնական զարգացումների առաջընթացի մասին:

Ինչպես հաղորդվել է Գործադիր տնօրենների խորհրդին, ՄՖԿ-ն ակնկալում է, որ ընկերությունը 2008 թ. կհամապատասխանի ՄՖԿ բոլոր պահանջներին, իսկ 2009 թ. կեսերին կկայացվի որոշում Ամուլսարի ծրագրի՝ զարգացման փուլին անցնելու վերաբերյալ:

2007 թ. հուլիսին ստորագրված բաժնետերերի համաձայնագրով ծրագիրը պարտավոր է համապատասխանել ԲՍԳԾ-ին, ինչպես նաև ներկայացնել ՄՖԿ-ին իր գործողությունների վերաբերյալ տարեկան մշտադիտարկման զեկույցներ (ՏՄԶ):

Եզրակացություն

Սույն փորձաքննության ընթացքում դիտարկված նյութերի հիման վրա ՀԱՊ-ը չի կարող որոշակի եզրակացություն տալ առ այն, թե արդյոք ՄՖԿ-ի կողմից նախքան ներդրումը կատարված բնապահպանական և սոցիալական դիտարկումը համապատասխանում էր ռիսկին և ուստի արդյոք ՄՖԿ-ն ունի ողջամիտ ակնալիքներ առ այն, որ ծրագիրը կհամապատասխանի գործունեության չափանիշներին: Մասնավորապես, ՀԱՊ-ը հարցեր ունի ՄՖԿ-ի կողմից իրականացված բնապահպանական և սոցիալական դիտարկման այն եզրակացությունների վերաբերյալ, որոնք առնչվում են ծրագրի հետևանքներին և ծրագրի հանդեպ հանրային աջակցության աստիճանին՝ հաշվի առնելով, որ ՄՖԿ էկոլոգիական և սոցիալական ոլորտի անձնակազմը չի այցելել ծրագրային տեղանքը: Բացի այդ, ՀԱՊ-ը հարցեր ունի այն փաստի վերաբերյալ, որ ՄՖԿ-ն վստահել էր Նյումոնթի ներգրավմանը և երաշխավորել, որ Լիդիանի ակտիվները կզարգանան արդյունավետության ոլորտի լավագույն փորձի համաձայն, այնինչ Նյումոնթն այնուհետև դուրս եկավ ներդրումային ծրագրից:

Ծրագրի վերահսկողություն

ՄՖԿ-ն պարտավոր է վերահսկել իր հաճախորդի բնապահպանական և սոցիալական գործունեությունը ներդրումների ողջ ընթացքում: Համաձայն ԲՍԴԸ-ի՝ <<Բնապահպանական և սոցիալական վերահսկողության նպատակն է մշակել և պահպանել այն

[6] ՄՖԿ ներդրումները Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերությունում, Բնապահպանական և սոցիալական դիտարկման ամփոփագիր, մայիս 2007, http://goo.gl/B8Dha2

տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է գնահատելու համար համապատասխանության կարգավիճակը Գործունեության չափանիշների (ԳՉ), ընդհանուր և ոլորտին բնորոշ Բնապահպանական, առողջության ու ապահովության ուղեցույցի (ԲԱԱՈՒ), ինչպես նաև Բնապահպանական ու սոցիալական ոլորտի գործողությունների ծրագրի (ԲՍԳԾ կամ գործողությունների ծրագիր) հետ[7]: Սույն փորձքաննության գլխավոր նպատակն է պարզել, թե արդյոք բողոքում բարձրացված խնդիրների առումով ծրագիրը վերահսկվել է համաձայն ՄՖԿ քաղաքականությունների և ընթացակարգերի:

Պահանջներ

Ծրագրի վերահսկողությունը հիմնված է հաճախորդի կողմից ներկայացվող և ՄՖԿ-ի կողմից դիտարկվող տարեկան մշտադիտարկման զեկույցների (ՏՄԶ), հաճախորդի հետ քննարկումների և ՄՖԿ-ի կողմից մշակված ԲՍԴԸ-ով պահանջվող ծրագրային տեղանքների այցելության վրա: Եթե հաճախորդը չի համապատասխանում իրեն ներկայացվող բնապահպանական և սոցիալական պահանջներին, ՄՖԿ-ն պարտավոր է <<աշխատել հաճախորդի հետ վերջինիս համապատասխանությունը հնարավորինս վերականգնելու նպատակով: Եթե հաճախորդը չի կարողանում վերականգնել համապատասխանությունը, ՄՖԿ-ն դիմում է իրավական պաշտպանության համապատասխան միջոցների[8]>>:

1-ին Գործունեության չափանիշը (ԳՉ1՝ Սոցիալական ու բնապահպանական գնահատման և կառավարման համակարգեր) ընդգծում է սոցիալական և բնապահպանական գործունեության կառավարման կարևորությունը ծրագրի ողջ ընթացքում:

Բողոքում բարձրացված խնդիրների առնչությամբ ԳՉ1-ը սահմանում է, որ <<ռիսկերն ու հետևանքները կվերլուծվեն ծրագրի ազդակիր տարածքի վերլուծության շրջանակներում: Ծրագրի ազդակիր տարածքը համախատասխանաբար ներառում է. (i) ծրագրի առաջնային տեղանքը (տեղանքները) և դրան (դրանց) առնչվող ու հաճախորդի (այդ թվում՝ նրա կապալառուների) կողմից կառուցվող կամ հսկվող այլ կառույցները, […] (iii) հնարավոր ազդակիր տարածքները, որոնք կարող են ենթարկվել միասնական հետևանքների ծրագրի հետագա պլանավորված զարգացումների, որևէ գործող ծրագրի կամ պայմանի, ինչպես նաև ծրագրին առնչվող և Սոցիալական ու էկոլոկոգիական գնահատման ընթացքում իրապես սահմանված այլ հետևանքների արդյունքում>> (պարբերություն 5).

Բացի այդ, համաձայն ԳՉ1-ի՝ <<ռիսկերն ու հետևանքները նույնպես կվերլուծվեն ծրագրի իրականացման գլխավոր փուլերի, այդ թվում՝ նախաշինարարական, շինարարական, շահագործման և շահագործման դադարեցման կամ փակման փուլերում>> (պարբերություն 6):

Շահագրգիռ կողմերի ներգրավման կապակցությամբ ԳՉ1-ը սահմանում է, որ <<արդյունավետ խարհիրդակցությունը (i) պետք է հիմնված լինի համապատասխան պատշաճ տեղեկատվության, այդ թվում փաստաթղթերի և պլանների նախագծերի նախնական ներկայացման վրա, (ii) պետք է շուտ մեկնարկի Սոցիալական և բնապահպանական գնահատման գործընթացում, (iii) կենտրոնանում է սոցիալական և բնապահպանական ռիսկերի և բացասական հետևանքների, ինչպես նաև դրանց հասցեագրմանն ուղղված առաջարկված միջոցառումների և գործողությունների վրա, և (iv) իրականացվում են

[7] ԲՍԴԸ 6, պարբերություն 1, տարբերակ 5, օգոստոս 16, 2010

[8] Բնապահպանական և սոցիալական կայունության ՄՖԿ քաղաքականություն, պարբերություն 45, հունվար 2012

ընթացիկ կերպով՝ ռիսկերի և հետևանքների ի հայտ գալուն պես>> (պարբերություն 21): Հաճախորդը նույնպես պարտավոր է <<ստեղծել բողոքների ներկայացման և դիտարկման մեխանիզմ ստանալու և լուծումներ տալու համար ազդակիր համայնքների կողմից հաճախորդի բնապահպանական և սոցիալական գործունեության առնչությամբ բարձրացված մտահոգություններին և բողոքներին>> (պարբերություն 23):

Ծրագրի վերահսկողությունը ՄՖԿ-ի կողմից

<u>Ընդհանուր վերահսկողություն</u>

ՄՖԿ-ն իր կողմից Լիդիանում կատարված ներդրման վերահսկողությունը սկսեց 2007 թ.: Վերջինիս փաստաթղթային հիմքը հենվում է ընկերության ՏՄԶ-ների տարեկան դիտարկումների ու տեղանքի վերահսկման տարեկան այցերի (ՏՎՏԱ) վրա:

Հետագա ներդրումներն ու բաժնետոմսերի երաշխավորագրերի տրամադրումը

2009 թ. ՄՖԿ-ն կատարեց հաջորդ ներդրումն ընկերությունում՝ կենտրոնանալով Ամուլսարի ծրագրի վրա: Սակայն տեղանքի որևէ որոշակի պատշաճ ջանադրություն չիրականացվեց, քանի որ այդ առումով ՄՖԿ-ն վստահում էր ընկերության՝ իր կողմից իրականացվող վերահսկողությանը: Համաձայն նշված ներդրմանն առնչվող ՄՖԿ փաստաթղթերի՝ ակնկալվում էր, որ 2009 թ. վերջին Նյումոնթը կավելացներ համատեղ ձեռնարկության իր մասնաբաժինը՝ հասցնելով այն 80 տոկոսի, և ծրագիրը կանցներ արտադրության փուլին 2011 թ.: Բացի այդ, համաձայն ՄՖԿ-ի՝ այն իրականացրել է համաձայնեցված ԲՍԳԾ-ում ներառված բոլոր գործողությունները, իսկ 2009 թ. ԲՍԳԾ-ն վերանայվել/ընդլայնվել է արտացոլելու համար ծրագրի կարգավիճակն այդ ժամանակ: Այնուհետև, ՄՖԿ-ն կանոնավոր կերպով կատարեց հետագա ներդրումներն ու բաժնետոմսերի երաշխավորագրերի տրամադրումն ընկերությանը (մանրամասների համար տե՛ս Հավելվածը):

<u>ԲՍԿՀ-ի մշակումն ու կիրառումը հետազոտման գործողությունների իրականացման նպատակով</u>

2007-2013թթ. ՄՖԿ-ի կողմից իրականացվող վերահսկողությանն առնչվող փաստաթղթերում նշվող հիմնական մտահոգությունը վերաբերում էր ընկերությունում հետազոտման գործողությունների և նախնական շինարարական աշխատանքների (ՆՇԱ) համար նախատեսված պատշաճ կորպորատիվ ԲՍԿՀ-ի բացակայությանը: Վերջինս առկայությունը պարտադիր է համաձայն ԲՍԳԾ-ի: Արդյունքում, 2013 թ. հուլիսին ՄՖԿ-ն տեղեկացրեց ընկերությանը, որ որևէ հետագա ֆինանսավորում չի կարող տրամադրվել մինչև խնդրի հասցեագրումը: Ավելի ուշ 2013թ. ՄՖԿ-ի կողմից իրականացվող վերահսկողությանն առնչվող փաստաթղթերում հաստատվեց կորպորատիվ ԲՍԿՀ-ի մշակումը:

<u>Ծրագրի ազդակիր տարածքն ու շահագրգիռ կողմերի ներգրավմանն ուղղված գործողությունները</u>

Ծրագրի նախնական փուլերում ՄՖԿ-ն արտահայտեց մտահոգություններ Ամուլսարի շուրջ գտնվող համայնքների հետ ընկերության հաղորդակցման կապակցությամբ, հատկապես, որ տեղի էր ունեցել խորհրդակցություն հիմնականում գյուղապետերի, այլ ոչ համայնական ավելի լայն շերտերի հետ: Բացի այդ, ՄՖԿ-ն բարձրացրեց հարցեր ընկերության կողմից ծրագրի ազդակիր տարածքում համայնքների որոշման նպատակով կիրառված

մեթոդաբանության վերաբերյալ: Արդյունքում, ՄՖԿ-ն հանձնարարեց ընկերությանը վերանայել շահագրգիռ կողմերի ներգրավման իր գործընթացը և ընդլայնել ծրագրի ազդակիր տարածքը՝ ներառելով Ջերմուկ քաղաքը: Հետագայում 2011 թ. հոկտեմբերին ի պատասխան ՄՖԿ-ի, ընկերությունը մշակեց շահագրգիռ կողմերի ներգրավման ծրագիր (ՇԿՆԾ) դյուրացնելու համար բարելավված հաղորդակցումը համայնքների հետ: ՄՖԿ փաստաթղթերը չեն ներառում ընկերության կողմից ներդրված բողոքների ներկայացման և դիտարկման մեխանիզմի գնահատում:

Բողոքարկուների՝ Սևանա լճի վրա հնարավոր հետևանքների հետ կապված մտահոգությունների առնչությամբ ՀԱՊ-ը նշում է, որ լիճը չի համարվում ծրագրի ազդակիր տարածք:

<u>ՇՄԱԳ-ի և ԲՍԱԳ-ի գործընթացների վերահսկողություն</u>

Ծրագրի իրականացմանը զուգահեռ ընկերությունը ներկայացրեց մի քանի ազգային ՇՄԱԳ-եր ստանալու համար հետազոտման, ՆՇԱ և հանքի կառուցման թույլտվություններ: Ծրագրի կառուցվածքի վերանայումից հետո իրականացվեց մեկ այլ ՇՄԱԳ, որը 2014 թ. հոկտեմբերին հաստատվեց բնապահպանության նախարարի կողմից: 2014 թ. նոյեմբերին տրամադրվեց հանքավայրի շահագործման նոր թույլտվություն: Ի լրումն արդեն իսկ պատրաստված ՇՄԱԳ-ի, ընկերությունը պարտավորվում էր իրականացնել և պատրաստել ԲՍԱԳ՝ համաձայն ՄՖԿ-ի բնապահպանական և սոցիալական ոլորտին առնչվող պահանջներին և Արդյունաբերական լավ միջազգային փորձին: Համաձայն ՀԱՊ-ի՝ ՄՖԿ-ն սերտորեն աշխատել է ընկերության և վերջինիս միջազգային խորհրդատուների հետ՝ աջակցելու համար ԲՍԵԳ-ի կազմմանը, որը զեկույցը գրելու պահին ակնկալվում էր հրապարակել 2015թ. ապրիլին:

<u>Ռադիոակտիվություն</u>

Անդրադառնալով բողոքում բարձրացված ռադիոակտիվ թունավորման ռիսկերին՝ ընկերության՝ 2014 թ. հրապարակված Իրագործելիության ուսումնասիրության մեջ նշվում է, որ ծրագրից բխող ռադիոակտիվության հավանականությունը գնահատվել և դիտարկվել է ռադիացիոն պաշտպանության ոլորտում հավատարմագրված միջազգային ընկերության կողմից[9]: Իրագործելիության ուսումնասիրության մեջ նաև նշվում է, որ ճառագայթման ուժգնությունը համեմատվել է միջազգային չափանիշների հետ (ՄԱԿ Ատոմային ռադիացիայի ազդեցության գիտական կոմիտե, UNSCEAR), ինչի արդյունքում պարզվել է, որ այն ցածր է սահմանված մակարդակներից:

<u>Հողատարածքի ձեռքբերում և ցիանային հարթակի տեղանքի ընտրություն</u>

Տեղի ունեցավ ցիանային հարթակի (ՑՀ) տեղանքի ընտրություն: 2013 թ. ՄՖԿ-ն կասկածի տակ դրեց ՑՀ-ի տեղանքի ընտրության գործընթացը, քանի որ ըստ ՄՖԿ-ի՝ համայնքները պատշաճ կերպով ներգրավված չէին գործընթացում, և այդ ենթակառուցվածքի տեղադրման առնչությամբ որևէ համաձայնագիր կնքված չէր համայնքների և (կամ) մասնավոր հողատերերի հետ: Ավելի ուշ 2013 թ. ՄՖԿ-ն հայտնեց, որ ՀՀ կառավարությունը մերժեց ընկերության կողմից հանքի շահագործման թույլտվության դիմումը ՑՀ-ի համար ընտրված տեղանքի պատճառով: Սակայն թույլտվությունը տրամադրվեց 2014 թ. նոյեմբերին, երբ

[9] Լիդիան: Ամուլսարի հանքի իրագործելիության ուսումնասիրություն, 2014, http://goo.gl/165WZZ
Փորձաքննության մասին զեկույց: ՄՖԿ ներդրումները Հայաստանի Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերությունում

ընկերությունն ընտրեց նոր տեղանք ՑՀ-ի համար: ՑՀ-ի տեղանքի ընտրության առումով ՀԱՊ-ն ունի հարցեր շահագրգիռ կողմերի ներգրավվածության պատշաճության և դրան առնչվող հողատարածքների ձեռքբերման գործընթացների վերաբերյալ:

Կենսաբազմազանություն

ՄՖԿ-ի կողմից իրականացվող վերահսկողությանն առնչվող փաստաթղթերը ցույց են տալիս, որ կենդանական և բուսական աշխարհի վերաբերյալ իրականացվել են տարեկան հարցումներ, ինչի արդյունքում վերհանվել են Հայաստանի Կարմիր գրքում ներառված որոշ տեսակներ: ՄՖԿ-ն պահանջեց ընկերությանը հաշվի առնել ոչ միայն տեղական Կարմիր գիրքն, այլ նաև IBAT և IUCN կարմիր ցուցակները՝ համաձայն ԳՉ6-ի պահանջների: 2013 թ. հունիսին ՄՖԿ-ն հաստատեց, որ իրականացվել է կենսաբազմազանության նախնական վիճակի ուսումնասիրություն, և ըստ ԳՉ6-ի՝ որոշ տարածքներ ու տեսակներ որակվում են <<ծայրահեղ վտանգված բնակավայր>> բնութագրի ներքո: Սակայն 2014 թ. իրագործելիության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Ամուլսարում իրականացվող գործողություններն արդեն իրենց անդառնալի հետևանքն են թողել Կարմիր գրքում ներառված *Potentilla porphyrantha* տեսակի որոշ քանակության վրա[10]: Բացի այդ, համաձայն իրագործելիության ուսումնասիրության՝ ակնկալվում է, որ ծրագիրն բացասական հետևանքներ կունենա որոշ կարևոր բնակավայրերի և տեսակների վրա, ինչպես նաև երկարաժամկետ ազդեցություն կթողնի տեղական և բնական բուսականության վրա:

Մշակութային ժառանգություն

Ծրագրային տեղանքում իրականացված ուսումնասիրությունների հիման վրա ՄՖԿ փաստաթղթերում որպես վերահսկման կարևոր առարկա նշվում է հնագիտական ռեսուրսների կառավարումն համաձայն տեղական և միջազգային ուղեցույցների: Ըստ ՀԱՊ-ի՝ իրականացվել են հնագիտական կարգավիճակի նախնական ուսումնասիրություններ, իսկ 2014թ. Իրագործելիության ուսումնասիրության մեջ նշվում է, որ շինարարության փուլում Chance Finds ընթացակարգի կիրառման հետ մեկտեղ մշակվել է Մշակութային ժառանգության կառավարման ծրագիր նվազեցնելու համար բացասական հետևանքներն հնագիտական վայրերի վրա:

Եզրակացություն

Փորձաքննության ընթացքում դիտարկված նյութերը բավարար չէին, որպեսզի ՀԱՊ-ը տրամադրի որոշակի եզրակացություն առ այն, թե արդյոք ՄՖԿ-ի կողմից ծրագրի վերահսկողությունը բավարար էր բողոքարկուների կողմից բարձրացված բողոքների առնչությամբ: Մասնավորապես, ՀԱՊ-ը վերահանել է հարցեր, որոնք առնչվում են. (i) ՄՖԿ-ի պատասխանի պատշաճությանը ընկերության կողմից ԲՍԿՀ-ի և շահագրգիռ կողմերին ներգրավելու ծրագրի մշակման գործընթացում տեղի ունեցած ուշացումների կապակցությամբ, (ii) ՄՖԿ-ի ներգրավվածության պատշաճությանը ընկերության կողմից ՑՀ-ի տեղադրման տեղանքի ընտրության և դրա համար նախատեսված հողատարածքի ձեռքբերման գործընթացում, և (iii) ՄՖԿ-ի կողմից ընկերության բնապահպանական և սոցիալական հետևանքների գնահատման գործընթացների և կառավարման պահանջվող պլանների մշակման, այդ թվում՝ ծրագրի ազդակիր տարածքի որոշմանն ու

[10] Լիդիան: Ամուլսարի հանքի իրագործելիության ուսումնասիրություն, 2014, http://goo.gl/165WZZ Փորձաքննության մասին զեկույց: ՄՖԿ ներդրումները Հայաստանի Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերությունում

կենսաբազմազանության վրա դրա ազդեցությանն առնչվող խնդիրների վերահսկման պատշաճությանը:

IV. Որոշում

Չափանիշների համապատասխանության ստուգմանն ուղղված փորձաքննության նպատակն է որոշել բնապահպանական և սոցիալական ոլորտներում ՄՖԿ-ի գործունեության աուդիտի նպատակահարմարությունն ստացված բողոքի առնչությամբ: Աուդիտի նպատակահարմարությունը որոշելիս ՀԱՊ-ը հաշվի է առնում մի շարք գործոններ, այդ թվում՝ բողոքում վերհանված բնապահպանական և սոցիալական մտահոգությունների կարևորությունը, այդ խնդիրների առնչությամբ բնապահպանական և սոցիալական ոլորտներում ՄՖԿ-ի գործունեության նախնական դիտարկումը և աուդիտի նպատակահարմարության ավելի ընդհանուր գնահատումը:

Այս դեպքում ՀԱՊ-ը որոշում է կայացնում, որ բողոքը ներառում է բավարար մտահոգություններ ծրագրի բնապահպանական և սոցիալական հետևանքների հնարավոր կամ փաստացի շրջանակի վերաբերյալ: Նման որոշման հանգելիս ՀԱՊ-ը հաշվի է առել այն փաստը, որ ՄՖԿ-ն մինչ օրս միայն ֆինանսավորել է հանքի շինարարության նախապատրաստական աշխատանքները, իսկ հանքի շինարարությունը ֆինանսավորելու վերաբերյալ որևէ որոշում չի կայացվել: Այնուամենայնիվ, ՄՖԿ-ի կողմից ընկերությունում կատարված ներդրումները հստակ նպատակ ունեն հնարավորություն ստեղծել հանքի շինարարության համար, ինչն ակնկալվում է սկսել շուտով: Հաշվի առնելով, որ բնապահպանական և սոցիալական ոլորտներում ՄՖԿ-ին ներկայացվող պահանջները տարածվում են մինչ օրս ֆինանսավորվող նախապատրաստական աշխատանքների վրա՝ ՀԱՊ-ը եզրակացնում է, որ բողոքարկուների կողմից բարձրացվող մտահոգությունները տեղին են ՄՖԿ գործունեության, մասնավորապես՝ այդ ներդրումների առումով: ՀԱՊ-ը նույնպես վերհանել է հարցեր ՄՖԿ-ի կողմից ծրագրի բնապահպանական ու սոցիալական ոլորտներին առաջադրվող պահանջների դիտարկման և վերահսկման վերաբերյալ:

Բոլոր նկատառումների հաշվառման արդյունքում ՀԱՊ-ը որոշում է կայացնում իրականացնել սույն ծրագրի մակարդակով ՄՖԿ-ի բնապահպանական և սոցիալական գործունեության աուդիտ: Նշված աուդիտի Տեխնիկական առաջադրանքը կհրապարակվի համաձայն ՀԱՊ-ի Գործառնական ուղեցույցի:

Հավելված՝ ՄՖԿ ներդրումները Լիդիան Ինթերնեյշնլ Լիմիթեդ ընկերությունում

Գործարքներ	Ամսաթիվ	Ներդրում (CAD)
Նախնական ներդրում	Հուլիսի 7	2,000,000
Հավելում 1-ին ներդրմանը	Հոկտեմբերի 7	80,000
Հավելում 2-րդ ներդրմանը	Դեկտեմբերի 7	1,250,000
Հավելում 3-րդ ներդրմանը	Մայիսի 9	1,390,938
Բաժնետոմսերի երաշխավորագիր	Հունվարի 10	100,000
Հավելում 4-րդ ներդրմանը	Մարտի 10	1,778,699
Բաժնետոմսերի երաշխավորագիր	Հոկտեմբերի 10	400,000
Հավելում 5-րդ ներդրմանը	Նոյեմբերի 10	3,253,110
Բաժնետոմսերի երաշխավորագիր	Դեկտեմբերի 11	2,000,000
Բաժնետոմսերի երաշխավորագիր	Մարտի 13	1,953,937
Հավելում 6-րդ ներդրմանը	Ապրիլի 14	1,731,000
Հավելում 7-րդ ներդրմանը	Մարտի 15	1,363,264
	Ընդհանուր	**17,300,948**

TSX-ում ցուցակագրվելու կապակցությամբ Լիդիանի՝ Մեծ Բրիտանիայից Կանադա տեղափոխվելու արդյունքում նախնական ներդրման GBP-ով (ֆունտ ստերլինգ) արտահայտված բաժնետոմսերն ու երաշխավորագրերը աղյուսակում փոխարկվել են CAD-ի (կանադական դոլար):